**Տիգրան Աթանեսյան. Փաստաբանների պալատի ֆինանսական գործունեությունը շատ մութ է**

03.09.2013 12:39

Հատված Փաստաբանների պալատի նախագահի թեկնածու Տիգրան Աթանեսյանի հարցազրույցից:

- Ռուբեն Սահակյանի «ժառանգորդ օպերացիան» ինչո՞վ է սպառնում Պալատին, որ ուզում եք կանխել:

- Փաստաբանների պալատն այն միավորումը չէ, որտեղ գործող նախագահը կարող է որոշել կամ կանխորոշել, թե ով պետք է լինի հաջորդ նախագահը: Դա տոտալիտար սեկտայի նման մի բան է դառնում: Եթե փաստաբանն ազատ չէ, ինքնուրույն որոշումներ չի կարող կայացնել: Պալատը պետք է նպաստի, որ փաստաբանները լինեն ազատ: Սա թելադրանք է:

Դեմ էի առհասարակ, որ գործող նախագահն առաջադրի ինչ-որ մեկի թեկնածությունը: Եթե այս օպերացիան իրականացավ, մենք վերածվելու ենք մի տխուր պետական հիմնարկի: Ես բացառում եմ որեւէ զարգացում: Նման կերպով դառնալ նախագա՞հ, այդ նախագահը ինչ քայլ ձեռնարկի, իր կողքին են լինելու յուրայինները, իր շրջապատը, իսկ հիմնական փաստաբանները, ինչպես հիմա է, աշխատելու են խուսափել Պալատից: Սա փաստաբանական ինստիտուտի կայացմանը լրջագույն հարված է լինելու:

- Ենթադրենք, հիմա Ռուբեն Սահակյա՛նը չի Փաստաբանների պալատի նախագահը, այլ դուք եք, դրանից ի՞նչ է փոխվում:

- Շատ բան կփոխվի: Նախ, Պալատը չունի տարեկան գործունեության ծրագիր, նման ծրագիր չի ներկայացվում փաստաբանների քննարկմանը, ոչ մեկի առաջարկը չի լսվում, 21-րդ դարում մենք ունենք մի վեբ– կայք, որտեղ չկա ոչ ինտերակտիվ կառավարման ձեւ, ոչ ֆորում, որտեղ փաստաբանները կարծիքներ կփոխանակեն: Այսինքն, նման տեխնոլոգիաների կիրառմամբ բոլոր փաստաբաններին պետք է տալ հնարավորություն՝ տեղեկանալ ինչ է կատարվում, ինչ է ծրագրվում, երբ են լինելու խորհրդի նիստերը, փաստաբանը պետք է կարողանա կարծիք հայտնել որոշման նախագծերի վերաբերյալ: Ինչո՞ւ պետք է միշտ նույն մարդիկ գումարներ ստանան եւ մասնակցեն քաղաքից դուրս կազմակերպվող սեմինարներին: Պետք է սկսնակ փաստաբաններին ինքնադրսեւորվելու հնարավորություն տալ, ինչը չի արվում:

Պալատի ֆինանսական գործունեությունը շատ մութ է, անհասկանալի, միջազգային համագործակցությունը զրո է, ոչինչ չեն արել: Պալատի խորհրդի գործունեության մեջ հստակություն ու թափանցիկություն պետք է մտցնել, ծրագրեր մշակել, աշխատանքներում ներգրավել փորձառու իրավաբանների: Կա գիտավերլուծական կենտրոն, չգիտես ինչ են անում, լուրջ էքսպերտների կարիք կա այնտեղ: Շատ են ուղղությունները ու անելիքները:

Լուսինե ԲԱՐՍԵՂՅԱՆ

Աղբյուրը՝ http://www.aravot.am/2013/09/03/282643/

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })